

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵԲ-ԳՀԾՁԲ-21/16

ք. Երևան

«29» դեկտեմբերի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Անուշ Պետրոսյանը, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **մինչև 5540000** (հինգ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով**: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Սույն պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

**ՎԳ-ն** պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

**ՄԳ-ն** ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

**ՆԳ-ն** ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

**Ք**.

**Ծ-ն** մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

**Ք-ն** մատուցված ծառայության քանակն է:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1-4 չափաբաժինների համար 30 (երեսուն) տոկոսի չափով, իսկ 5-րդ և 6րդ չափաբաժինների մասով 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 1-4 չափաբաժինների համար 0.19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ 5-րդ և 6րդ չափաբաժինների մասով 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂՁԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

Երևանի քաղաքապետարան  
ք. Երևան, Արգիշտի փող. 1  
Կենտրոնական գանձապետարան  
ՀՎՀՀ՝ 02593108

Է. Կիրակոսյան



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Անուշ Պետրոսյան Ա/Ձ  
ք. Երևան, Արշակունյաց 5  
«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1570004526880100  
ՀՎՀՀ 49557658

Ա. Պետրոսյան



ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության								
Ձ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափում և միավորը	Ընդհ. գինը/ՀՀ դրամ	Ընդհ. քանակը	մատուցման		
						հասցեն	Ժամկետը**	
<b>Արաբկիր վարչական շրջան</b>								
1	50311120/549	<p><b>Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:</li> <li>Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:</li> <li>Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:</li> <li>Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:</li> <li>Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021 թ. ներառյալ/ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում:</li> <li>Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:</li> </ul>	դրամ	Մինչև 1000000	1	Արաբկիր վարչական շրջան, Ն. Զարյան 27	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 2021թ.<դեկտեմբերի> 25-ը	
		<p><b>Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում:</b></p> <p><b>Պատճենահանող սարքի վերանորոգում և սպասարկում (քարտրիջների լիցքավորում):</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:</li> <li>Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:</li> <li>Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:</li> <li>Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:</li> <li>Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021 թ. ներառյալ/ մեր կողմից ներկայացված ցանկացած</li> </ul>	դրամ	Մինչև 2100000	1	Արաբկիր վարչական շրջան, Ն. Զարյան 27	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 2021թ.<դեկտեմբերի> 25-ը	

		<p>պահանջի և քանակի դեպքում:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:</li> </ul>					
3	50111260/512	<p><b>Օդորակիչների վերանորոգում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:</li> <li>- Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:</li> <li>- Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:</li> <li>- Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:</li> <li>- Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021 թ. ներառյալ՝ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում:</li> <li>- Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:</li> </ul>	դրամ	Մինչև 1000000	1	Արաբկիր վարչական շրջան, Ն. Ջաղյան 27	Պայմանագիրը /իսկառնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 2021թ. <դեկտեմբերի> 25-ը
<b>ԲԿԱԳ</b>							
4	50311250/512	<p><b>Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: (քարտրիջների լիցքավորում)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:</li> <li>- Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:</li> <li>- Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:</li> <li>- Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:</li> <li>- Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021 թ. ներառյալ՝ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում:</li> <li>- Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում</li> </ul>	դրամ	Մինչև 100000	1	Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս 56	Պայմանագիրը /իսկառնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 2021թ. <դեկտեմբերի> 25-ը

		սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:					
<b>Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան</b>							
5	50311120/543	<p><b>Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:</li> <li>- Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:</li> <li>- Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:</li> <li>- Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:</li> <li>- Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021 թ. ներառյալ/ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում:</li> </ul> <p>Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:</p>	դրամ	Մինչև 585000	1	ք. Երևան Գ. Աննադրի 11	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2021թ.
6	50311250/510	<p><b>Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պատճենահանող սարքի և տպիչների վերանորոգում և սպասարկում (քարտրիջների լիցքավորում)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:</li> <li>- Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:</li> <li>- Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:</li> <li>- Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:</li> <li>- Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021 թ. ներառյալ/ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում:</li> </ul> <p>Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:</p>	դրամ	Մինչև 755000	1	ք. Երևան Գ. Աննադրի 11	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2021թ.

Չափաբաժին 1* Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում	Ծառայության միավորի առավելագույն գինը
<b>Համակարգչի</b>	
LGA 775/ 1150/ 1151/ 1155/ Մայրական տպասայի նորոգում, ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը	1000
LGA 775/ 1150/ 1151/ 1155/ Մայրական տպասայի փոխարինում, ներառյալ մայրական տպասալը	30000
Օպերատիվ հիշողություն RAM DDR2 1GB 667/800-ի փոխարինում ներառյալ RAM-ը	2000
Օպերատիվ հիշողություն RAM DDR2 2GB 667/800-ի փոխարինում ներառյալ RAM-ը	2000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 2GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը	6000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը	6000
Օպերատիվ հիշողություն RAM DDR4 4GB –ի փոխարինում ներառյալ RAM-ը	8000
PCI Express 2GB 128bit գրաֆիկական քարտի փոխարինում ներառյալ քարտը	13000
Կոշտ սկավառակ HDD 500GB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	22000
Կոշտ սկավառակ HDD 1TB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	28000
Կոշտ սկավառակ HDD 2TB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	35000
SSD SATA3 120GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն	15000
SSD SATA3 240GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն	28000
SSD SATA3 480GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն	36000
Intel Core i3-6100 3.70 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը	15000
Intel Core i5 6500 3.20 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը	25000
Intel Core i7 6700K 4.00 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը	35000
Սնուցման բլոկ 450Watt-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	8000
Սնուցման բլոկի 600Watt-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	15000
DVD-RW փոխարինում ներառյալ DVD-RW-ն SATA	2000
Համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ պահարանը	1000
Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը	1000
Անխափան սնուցման սարքի (UPS) ղեկավարող սալիկի վերանորոգում	1000
Անխափան սնուցման սարքի (UPS) մարտկոցի փոխարինում 12V , 9A	12000
Անխափան սնուցման սարքի (APC Smart 1500 UPS) մարտկոցի փոխարինում	30000
Անխափան սնուցման սարքի (UPS) վերաձրագրավորում	5000
Անխափան սնուցման սարքի (UPS) ղեկավարող սալիկի վերանորոգում	5000
Անխափան սնուցման սարքի (UPS) մարտկոցի փոխարինում 12V , 9A	18000
<b>Մոնիտորի</b>	
Սնուցման բլոկի վերանորոգում	8000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	8000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 17" մատրիցան	15000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 19" մատրիցան	16000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 19,6" մատրիցան	17000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 20" մատրիցան	18000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 21.5" մատրիցան	19000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 22" մատրիցան	20000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 27" մատրիցան	21000
<b>Ընդամենը /մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների</b>	<b>547000</b>

հանրագումարը՝ նախահաշիվ/	
Ընդամենը /ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը/	375000

Չափաբաժին 2* Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պատճենահանող սարքի և տպիչների վերանորոգում և սպասարկում: (քարտրիջների լիցքավորում)	Ծառայության միավորի առավելագույն գինը
<b>Քարտրիջների լիցքավորում և վերանորոգում</b>	
HP CF217A/CF219A քարտրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	7000
HP CF217A/CF219A քարտրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	4000
HP CF217A/CF219A քարտրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	5000
HP CF217A/CF219A քարտրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
HP CF217A/CF219A քարտրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
HP CF217A/CF219A քարտրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
Canon 723 B/C/M/Y քարտրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	6000
Canon 723 B/C/M/Y քարտրիջի քարտրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	2000
Canon 723 B/C/M/Y քարտրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	2000
Canon 723 B/C/M/Y քարտրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	2000
Canon 723 B/C/M/Y քարտրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	2000
Canon 723 B/C/M/Y քարտրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	2000
Canon 723 B/C/M/Y քարտրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը	2000
LEXMARK CX310-DN քարտրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	2000
LEXMARK CX310-DN քարտրիջի քարտրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	1000
LEXMARK CX310-DN քարտրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	1000
LEXMARK CX310-DN քարտրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1000
LEXMARK CX310-DN քարտրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1000
LEXMARK CX310-DN քարտրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1000
Canon 712 քարտրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	5000
Canon 712 քարտրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	4000
Canon 712 քարտրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	5000
Canon 712 քարտրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
Canon 712 քարտրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
Canon 712 քարտրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
Samsung D101s քարտրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	5000
Samsung D101s քարտրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	4000
Samsung D101s քարտրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	5000
Samsung D101s քարտրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
Samsung D101s քարտրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
Samsung D101s քարտրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
05A քարտրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	5000
05A քարտրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	4000
